https://doi.org/10.46991/S&L/2020.87.095

ՎԵՐԱԴԱՍ ԴԱՏԱԽԱԶԻ ԿՈՂՄԻՑ ՀՍԿՈՂ ԴԱՏԱԽԱԶԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ «ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ» ԴԵՄ ՔՆՆԻՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՈՐՈՇ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Արսեն Մարտիրոսյան
ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Քննիչի դատավարական ինքնուրույնությունը արդյունավետ նախաքննություն իրականացնելու գործոններից մեկն է և ապահովվում է քրեական գործի քննության օրինականությունն ու հիմնավորվածությունը[1]: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ նաև՝ ՀՀ քր. դատ. օր.) նույնպես ամրագրված են քննիչի դատավարական ինքնուրույնությունը բնութագրող մի շարք դրույթներ: Մասնավորապես, քննիչն իրավունք ունի՝

- գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար ինքնուրույն ուղղություն տալ քննությանը (ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 3-րդ մաս),
- ընդունել անհրաժեշտ որոշումներ, իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է ստանալ դատարանի թույլտվությունը կամ դատախազի համաձայնությունը (ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 3-րդ մաս),
- իր ներքին համոզմամբ գնահատել գործով ձեռքբերված ապացույցները (ՀՀ քր. դատ. օր.-ի 25-րդ հոդված),
- չհամաձայնել դատախազի ցուցումների, որոշումների հետ և գրավոր առարկություն ներկայացնել վերադաս դատախազին (ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 26-րդ և 27-րդ կետեր),
- պարտադիր կատարման համար գրավոր հանձնարարություններ տալ հետաքննության մարմնին (ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 6-ից 10-րդ կետեր) և այլն:

Դժվար չէ նկատել, որ քննիչի դատավարական ինքնուրույնությունը ի թիվս այլնի ընդգրկում է նաև քննիչի իրավունքը՝ չհամաձայնելու դատախազի ցուցումներին, որոշումներին և գրավոր առարկություն ներկայացնել վերադաս դատախազին[2]: Այս-

---

[1] Տե՛ս ***Дармаева В.Д.*** Следователь в уголовном судопроизводстве – М., 2007, С. 95.

[2] «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազը վերադաս է բոլոր դատախազների նկատմամբ, գլխավոր դատախազի տեղակալը վերադաս է բոլոր դատախազների նկատմամբ՝ իր համակարգման ոլորտում, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը վերադաս է տվյալ ստորաբաժանման բոլոր դատախազների նկատմամբ, զինվորական դատախազը վերադաս է զինվորական դատախազի տեղակալների, զինվորական կենտրոնական դատախազության և կայազորների զինվորական դատախազությունների բոլոր դատախազների նկատմամբ, զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը վերադաս է տվյալ ստորաբաժանման բոլոր դատախազների նկատմամբ, զինվորական դատախազի տեղակալը վերադաս է բոլոր դատախազների նկատմամբ՝ իր համակարգման ոլորտում, Երևան քաղաքի դատախազը վերադաս է Երևան քաղաքի վարչական շրջանների

պես, ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 26-րդ կետը սահմանում է, որ քննիչն իրավունք ունի հսկող դատախազի գրավոր ցուցումների կամ որոշումների հետ համաձայն չլինելու դեպքում դրանց վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացնել վերադաս դատախազին՝ չկասեցնելով դրանց կատարումը:

Նույն հոդվածի 4-րդ մասի 27-րդ կետի համաձայն՝ որպես մեղադրյալ ներգրավելու, հանցագործությունը որակելու և մեղադրանքի ծավալի, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու, վարույթ հարուցելու կամ նախաքննությունն ավարտելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին դատախազի ցուցումներին համաձայն չլինելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում դրանց վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացնել վերադաս դատախազին՝ առանց այդ ցուցումները կատարելու:

Իր հերթին ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետը սահմանում է, որ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս՝ դատախազի բացառիկ լիազորությունն է հսկող դատախազի որոշումների և ցուցումների վերաբերյալ քննիչի գրավոր առարկությունները ստանալու պահից յոթօրյա ժամկետում որոշմամբ մերժել այդ առարկությունները՝ հսկող դատախազի որոշումը կամ ցուցումը թողնել ուժի մեջ, կամ վերացնել հսկող դատախազի որոշումը կամ ցուցումը՝ առարկությունը ճանաչելով հիմնավորված:

Քննիչի դատավարական կարգավիճակը սահմանող քրեադատավարական մեջբերված դրույթների վերլուծությունից հետևում է, որ քննիչն իրավունք ունի նախաքննության ընթացքում վերադաս դատախազին առարկություն ներկայացնել հսկող դատախազի յուրաքանչյուր ցուցումի կամ որոշման դեմ՝ օրենքով հատկապես նախատեսված դեպքերում կասեցնելուվ դրանց կատարումը, այլ դեպքում՝ չկասեցնելով դրանց կատարումը:

Հսկող դատախազի ցուցումների (որոշումների) դեմ առարկություն ներկայացնելու դատավարական դրույթներ ամրագրված են նաև այլ պետությունների քրեադատավարական օրենսգրքերում: Օրինակ՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քննիչն իրավունք ունի միայն բողոքարկելու հսկող դատախազի այն գործողությունները (անգործությունը), ***որոնք նախատեսված են ՌԴ քրեադատավարական օրենքով***:

Մասնագիտական գրականության մեջ միասնական մոտեցում չկա այն հարցում, թե քննիչը դատախազի որ որոշումների կապակցությամբ կարող է գրավոր առարկություն ներկայացնել վերադաս դատախազին: Այսպես՝ հեղինակների մի մասը, վերլուծելով ՌԴ քրեադատավարական օրենքը, գտնում են, որ դատախազի ցանկացած որոշման դեմ քննիչը կարող է առարկություն ներկայացնել վերադաս դատախազին[1]:

Հեղինակների մյուս մասը գտնում է, որ այն որոշումների բողոքարկումը վերադաս դատախազին, որոնք քրեադատավարական օրենքով նախատեսված չեն, համարվում է ապօրինի[2]: Մասնավորապես՝ Ն.Վ. Գորակը, վկայակոչելով ՌԴ քր. դատ. օր.-ի որոշ դրույթներ, նշում է, որ «քննիչը իրավասու է բողոքարկելու դատախազի՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու, քրեական

դատախազների, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների բոլոր դատախազների նկատմամբ, մարզի դատախազը վերադաս է մարզի դատախազության բոլոր դատախազների նկատմամբ, Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազը վերադաս է Երևան քաղաքի վարչական շրջանի դատախազության բոլոր դատախազների նկատմամբ, կայազորի զինվորական դատախազը վերադաս է կայազորի զինվորական դատախազության բոլոր դատախազների նկատմամբ:

[1] Տե՛ս *Никифоров С.* Исполнение требований прокурора // Законность. 2009. N 4. С. 25-27.

[2] Տե՛ս *Сопин В.П.* Полномочия прокурора в стадии предварительного следствия // Законность. 2011. N 12. С. 38-39.

գործը լրացուցիչ քննության վերադարձնելու, մեղադրանքի ծավալը փոխելու կամ մեղադրյալի արարքը որակելու, մեղադրական եզրակացության մեջ տեղ գտած թերությունները վերացնելու և այն վերակազմելու (...) մասին որոշումները»: Դատախազի այլ որոշումներ քննիչի կողմից բողոքարկելու հնարավորություն քրեադատավարական օրենքով նախատեսված չէ, ինչը նշանակում է, որ դատախազի կողմից վերացված քննիչի այլ որոշումներ չեն կարող բողոքարկվել[1]:

Ինչպես վերը նշվեց, գործող քրեադատավարական օրենքի իրավակարգավորումների տեսանկյունից որևէ սահմանափակում նախատեսված չէ, թե քննիչը հսկող դատախազի որ որոշումների դեմ կարող է գրավոր առարկություն ներկայացնել վերադաս դատախազին: Այլ կերպ՝ ստացվում է, որ քննիչը հսկող դատախազի ցանկացած որոշման դեմ կարող է գրավոր առարկություն ներկայացնել վերադաս դատախազին, ինչը, մեր կարծիքով, չի կարող ընդունելի համարվել հետևյալ պատճառաբանությամբ:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ դատարանը, դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում:

Սույն հոդվածներով նախատեսված դեպքերում դատախազը կարող է անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել կամ հարուցված քրեական հետապնդումը դադարեցնել՝ նկատի ունենալով, որ այն դատախազի համար օրենքով սահմանված է որպես *տնօրինչական լիազորություն*[2]:

Ստացվում է, որ հսկող դատախազի՝ իր տնօրինչական լիազորությունից օգտվելու որոշման դեմ նախաքննություն իրականացնող քննիչը կարող է վերադաս դատախազին առարկություն ներկայացնել, ինչը, կարծում ենք, չի կարող որևէ դեպքում օրինաչափ համարվել:

Կամ, օրինակ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ մեղադրական եզրակացությամբ գործն ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, դատախազը իրավասու է որոշում կայացնել քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Ստացվում է, որ նշված իրավիճակում, երբ այլևս քրեական գործը քննիչի վարույթում չէ, հսկող դատախազի՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման դեմ քննիչը նույնպես կարող է գրավոր առարկություն ներկայացնել վերադաս դատախազին:

Այսպիսով՝ քրեադատավարական օրենքի կարգավորումների համակարգային մեկնաբանման տեսանկյունից գտնում ենք, որ ***քննիչը կարող է վերադաս դատախազին գրավոր առարկություն ներկայացնել հսկող դատախազի միայն այն որոշումների դեմ, որոնք կայացվել են քննիչի ընդունած որոշումների կապակցությամբ: Այլ կերպ՝ կարող է բողոքարկվել միայն քննիչի ընդունած որոշումների կապակցությամբ կայացված դատախազական ակտերը:*** Նշված կանոնից կարող է բացառություն կազմել միայն այն դեպքը, երբ ***հսկող դատախազի որոշմամբ քրեադատավարական օրենքի խախտում թույլ տալու հիմքով քննիչը հեռացվում է քրեական դատավարությանը մասնակցելուց:***

Միաժամանակ, որպեսզի գործնականում քննիչի կողմից հսկող դատախազի որոշումների դեմ առարկություն ներկայացնելու լիազորությունը տարածական չմեկնաբանվի, կարծում ենք, որ այն պետք է ստանա հստակ օրենսդրական կարգավորում:

---

[1] Տե՛ս *Горак Н.В.* Обжалование прокурору действий (бездействия) и решений органов предварительного расследования. Дисс. канд. юрид. наук, Краснодар, 2017, С. 172-173:

[2] Տե՛ս Տիգրան Առաքելյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի *թիվ ԵԱՔԴ/0217/01/14 գործով* որոշման 15-րդ կետը:

Քրեադատավարական օրենքով սահմանված է նաև, որ հսկող դատախազի որոշումների և ցուցումների վերաբերյալ քննիչի գրավոր առարկությունները ստանալու պահից վերադաս դատախազը պարտավոր է դրանք քննարկել *յոթօրյա ժամկետում*:

Հատկանշական է, որ վերադաս դատախազին հսկող դատախազի որոշումների դեմ քննիչի կողմից առարկություն ներկայացնելու որևէ ժամկետային սահմանափակում օրենքով նախատեսված չէ, իսկ ցուցումների հետ կապված ժամկետային սահմանափակում նախատեսված է միայն ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 27-րդ կետով նախատեսված ցուցումների դեպքում:

Գործնականում հաճախ քննիչների կողմից հսկող դատախազի որոշումների դեմ վերադաս դատախազին առարկություններ ներկայացվում են դրանք ստանալուց հետ տևական ժամանակ՝ մեկ կամ մեկուկես ամիս անց: Այս տեսանկյունից քրեադատավարական օրենքի կարգավորումները չեն կարող տրամաբանական համարվել այն իմաստով, որ առարկությունը քննարկող սուբյեկտի՝ տվյալ դեպքում վերադաս դատախազի համար նախատեսվել են ժամկետային սահմանափակումներ, իսկ այն ներկայացնող սուբյեկտի՝ քննիչի համար որևէ ժամկետային սահմանափակում նախատեսված չէ:

Կարծում ենք, որ յոթօրյա ժամկետային սահմանափակումը պետք է նախատեսվի նաև քննիչի համար և օրենքով ամրագրվի, որ հսկող դատախազի ցուցումների (բացառությամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 27-րդ կետով նախատեսված դպքերի) և բողոքարկման ենթակա որոշումների դեմ քննիչը կարող է գրավոր առարկություն ներկայացնել այն ստանալու պահից յոթօրյա ժամկետում:

ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածով կարգավորված չէ նաև այն հարցը, թե ինչպիսի որոշում պետք է կայացնի վերադաս դատախազը այն դեպքում, երբ քննիչը նույն օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 27-րդ կետով նախատեսված հսկող դատախազի ցուցումների դեմ առարկություն է ներկայացնում եռօրյա ժամկետի խախտմամբ:

Այս տեսանկյունից Ն.Ա. Մազուրովը գտնում է, որ քրեադատավարական օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ քննիչի կողմից վերադաս դատախազին բողոք ներկայացնելու դեպքում վարադաս դատախազն իրավասու է որոշում կայացնել քննիչի բողոքը առանց քննության թողնելու մասին[1]:

Ամբողջովին համամիտ լինելով հեղինակի դիրքորոշմանը՝ կարծում ենք, որ այն պետք է ստանա օրենսդրական կարգավորում և քրեադատավարական օրենքով նույնպես սահմանվի, որ օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ վերադաս դատախազին առարկություն ներկայացնելու դեպքում վերջինիս որոշում է կայացնում այն առանց քննության թողնելու մասին:

ՀՀ քր. դատ. օր.-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի կարգավորումների տասանկյունից հսկող դատախազի ցուցումների կամ որոշումների դեմ քննիչի կողմից ներկայացված առարկությունների քննարկման կապակցությամբ հսկող դատախազը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

1) մերժում է առարկությունները՝ հսկող դատախազի որոշումը կամ ցուցումը թողնելով ուժի մեջ,

2) վերացնում է հսկող դատախազի որոշումը կամ ցուցումը՝ առարկությունը ճանաչելով հիմնավորված:

Գործնականում հաճախ մեղադրական եզրակացությունը չհաստատելու քրեական գործը քննիչին վերադարձնելու մասին հսկող դատախազների որոշումների դեմ առարկություններ ներկայացնելիս քննիչները միջնորդում են վերադաս

---

[1] Տե՛ս *Мазуров Н.А.* Обжалование постановлений прокурора о возвращении уголовного дела следователю для производства дополнительного следствия // Законность. – 2013. – № 11. – С. 15-17.

դատախազին ***վերացնել դատախազի որոշումը և ուժի մեջ թողնել կազմված մեղադրական եզրակացությունը:***

Կամ՝ մեղադրական եզրակացությունը չհաստատելու մասին հսկող դատախազի որոշումը ստանալուց հետո քննիչը գրավոր առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին և առանց սպասելու առարկության կապակցությամբ վերադաս դատախազի որոշմանը՝ կատարում է հսկող դատախազի որոշման պահանջները և կրկին մեղադրական եզրակացություն կազմելով՝ ավարտում է նախաքննությունը:

Այս տեսանկյունից հետաքրքիր լուծումներ է նախատեսում ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքը: Այսպես՝ ՌԴ քր. դատ. օր.-ի 221-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քննիչի բողոքի քննարկման արդյունքում վերադաս դատախազը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) մերժում է միջնորդությունը բավարարելու վերաբերյալ քննիչի բողոքը,

2) վերացնում է հսկող դատախազի որոշումը: Այս դեպքում վերադաս դատախազը հաստատում է մեղադրական եզրակացությունը և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկում է դատարան:

Կարծում ենք, որ այս առումով ՌԴ օրենսդրի մոտեցումը ընդունելի է այն տրամաբանությամբ, որ եթե հսկող դատախազի և վերադաս դատախազի դիրքորոշումները տարբերվում են մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործով (օրինակ՝ հսկող դատախազը կարող է գտնել, որ անձի արարքը քննիչի կողմից ճիշտ չի որակվել և ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի ավելի խիստ պատասխանատվություն նախատեսող հոդվածով, իսկ վերադաս դատախազը, ընդհակառակը, գտնի, որ արարքը ճիշտ է որակված և այլն), ապա վերադաս դատախազի կողմից քննիչի առարկությունը հիմնավորված ճանաչելու դեպքում ճիշտ կլինի, որ մեղադրական եզրակացությունը հաստատվի վերջինի կողմից: Այս մոտեցումը բխում է (Դատախազության մասին) ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված դատախազի ինքնուրույնության և նրա գործունեությանը միջամտելու անթույլատրելիության սկզբունքից:

Գործնականում առանձին դեպքերում քննչական բաժնի պետի կողմից կայացվում է որոշում քննչական խումբ ստեղծելու՝ օրենքով նախատեսված հիմքերի ակնհայտ բացակայության պայմաններում, օրինակ, երբ քննվող քրեական գործը չունի բարդություն կամ մեծ ծավալ, կամ քննչական խմբի կազմում ընդգրկում է այնպիսի քննիչ, որը տվյալ քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելու իրավասություն չունի. օրինակ, երբ օրենքի խախտում թույլ տալու հիմքով քննիչը դատախազի որոշմամբ հեռացվել է տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց:

Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված և քննչական մարմնում քննված թիվ 55155319 քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից 2019 թվականի հունիսի 20-ին որոշում է կայացվել քննիչին քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները կոպտորեն խախտելու հիմնավորմամբ:

2019 թվականի հունիսի 22-ին քրեական գործը վարույթ է ընդունել քննչական ստորաբաժանման մեկ այլ քննիչ: 2019 թվականի հուլիսի 4-ին քննչական բաժնի պետը, հաշվի առնելով, որ թիվ 55155319 քրեական գործի նախաքննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է միաժամանակ իրականացնել քննչական և դատավարական մեծածավալ գործողություններ, որոշում է կայացրել նշված քրեական գործով քննչական խումբ կազմելու և նախաքննության կատարումը քննչական խմբին հանձնարարելու մասին:

Նույն որոշմամբ քննչական խմբի կազմում ընդգրկվել է նաև վերը նշված քրեական գործով քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացված քննիչը:

Քննչական խումբ կազմելու մասին կայացված որոշումից հետո նախաքննությունը տևել է ընդամենը 4 օր, ընդ որում խմբի կազմում ընդգրկված, սակայն մինչև այդ քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացված քննիչի կողմից գործով որևէ քննչական, դատավարական գործողություն չի իրականացվել:

Բերված օրինակում նախ քննչական բաժնի պետի կողմից քննչական խումբ ստեղծվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 194-րդ հոդվածով սահմանված հիմքերի ակնհայտ բացակայության պայմաններում (քննչական խումբ ստեղծելու հիմքը բացառապես գործի բարդության կամ դրա ծավալի մեծ լինելն է), բացի այդ՝ քննչական խմբում ընդգրկվել է տվյալ քրեական գործով քրեական դատավարությունից հեռացված քննիչը, այլ կերպ՝ ոչ պատշաճ սուբյեկտը:

Այսինքն՝ քրեադատավարական օրենքի կարգավորումների տեսանկյունից դատախազը, ստուգելով քննչական խումբ ստեղծելու մասին քննչական բաժնի պետի որոշման օրինականությունը, իրավասու չէ դրա անօրինական կամ անհիմն լինելու դեպքում այն վերացնել: Ստացվում է, որ տվյալ իրավիճակում քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը փաստում է միայն քննչական բաժնի պետի որոշման անօրինական կամ անհիմն լինելու հանգամանքը, սակայն որոշմամբ այն վերացնելու իրավասություն չունի, ինչը չի կարող ընդունելի համարվել:

Գտնում ենք, որ այս առումով նույնպես անհրաժեշտ է ՀՀ քր. դատ. օր.-ում կատարել լրացում և հսկող դատախազին իրավունք վերապահել վերացնելու ոչ միայն քննիչի, այլ նաև քննչական բաժնի պետի անօրինական կամ անհիմն որոշումները՝ միաժամանակ քննչական բաժնի պետին իրավունք վերապահելով հսկող դատախազի որոշման հետ համաձայն չլինելու դեպքում վերադաս դատախազին գրավոր առարկություն ներկայացնելու:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ սույն հոդվածի շրջանակներում առաջարկվող օրենսդրական լուծումները գործնականում կհստակեցնեն վերադաս դատախազ և քննիչ (քննչական բաժնի պետ) քրեադատավարական հարաբերություններում տեղ գտած խնդիրները, ինչն էլ իր հերթին կնպաստի մինչդատական վարույթի օրինականությանը և արդյունավետությանը:

НЕКОТОРЫЕ КЛЮЧЕВЫЕ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ПО РАЗРЕШЕНИЮ ВЫШЕСТОЯЩИМ ПРОКУРОРОМ ВОЗРАЖЕНИЙ, ПРЕДСТАВЛЕННЫХ СЛЕДОВАТЕЛЕМ ПРОТИВ УКАЗАНИЙ (РЕШЕНИЙ) НАДЗИРАЮЩЕГО ПРОКУРОРА

АРСЕН МАРТИРОСЯН

Начальник Управления по надзору за законностью досудебного производства в Специальной следственной службе РА Генеральной прокуратуры РА, кандидат юридических наук, доцент

Статья посвящена ключевым уголовно-процессуальным вопросам по разрешению вышестоящим прокурором возражений, представленных следователем против указаний, решений надзирающего прокурора. В первую очередь, предметом рассмотрения в рамках статьи стал вопрос о том, компетентен ли следова-

тель представлять письменные возражения против всех указаний, решений надзирающего прокурора или нет, а также основной вопрос полномочий вышестоящего прокурора в связи с их рассмотрением и разрешением.

В рамках статьи был рассмотрен также основной вопрос полномочия надзирающего прокурора отменять решения начальника следственного отдела, и было предложено предусмотреть его в законодательной форме, одновременно предоставить право начальнику следственного отдела в случае несогласия предъявлять письменные возражения вышестоящему прокурору.

SEVERAL CRIMINAL PROCEDURAL ISSUES TO SOLVE THE OBJECTIONS RAISED BY THE INVESTIGATOR AGAINST THE INSTRUCTIONS (DECISIONS) OF THE HIGHER PROSECUTOR TO THE SUPERVISING PROSECUTOR

Arsen Martirosyan
Head of the Department of Supervision over Legality of Pre-trial Proceedings in the RA Special Investigation Service of the Prosecutor General's office of the RA, Candidate of Law, Associate Professor

---

The article is devoted to the criminal procedural issues to solve the objections raised by the investigator against the instructions, decisions of the higher prosecutor to the supervising prosecutor. Within the scope of the article the question whether the investigator is entitled to present a written objection against the instructions, decisions of the supervising prosecutor or not, as well as the issue of the authorities of the higher prosecutor related with their discussion and solution.

The issue of authority of canceling the decisions of the head of investigative division by the supervising prosecutor was also discussed and it was suggested to be envisaged legally, at the same time in case of disagreement entitle the head of the investigative division to present a written objection to the higher prosecutor.

Բանալի բառեր – հսկող դատախազ, վերադաս դատախազ, քննիչ, քննչական բաժնի պետ, քննիչի դատավարական ինքնուրույնություն, առարկություն, մեղադրական եզրակացություն, քննչական խումբ:
Ключевые слова – надзирающий прокурор, вышестоящий прокурор, следователь, начальник следственного отдела, процессуальная самостоятельность следователя, возражение, обвинительное заключение, следственная группа.
Key words - supervising prosecutor, higher prosecutor, investigator, head of the investigative division, investigator's procedural autonomy, objection, bill of indictment, investigative group.